Իրան (պարս.՝ ایران Irān), նաև հայտնի որպես **Պարսկաստան**[1], պաշտոնապես **Իրանի Իսլամական Հանրապետություն** (պարս.՝ جمهوری اسلامی ایران)[2], ինքնիշխան պետություն Արևմտյան Ասիայում[3][4]: Ավելի քան 81 միլիոն բնակչությամբ[5] Իրանը աշխարհում բնակչության թվով 18-րդն է[6]: 1.648.195 կմ քառակուսի տարածքով այն երկրորդ ամենախոշոր երկիրն է Մերձավոր Արևելքում և 17-րդը՝ աշխարհում: Իրանը հյուսիս արևմուտքում սահմանակից է Հայաստանին, Ադրբեջանին և Ադրբեջանի մաս կազմող Նախիջևանին, հյուսիսում Կասպից ծովին, հյուսիս արևելքում Թուրքմենստանին, արևելքում Աֆղանստանին և Պակիստ

անին, հարավում Պարսից
ծոցին և Օմանի ծոցին,
արևմուտքում Թուրքիային և Իրաքին (
Իրաքյան Քուրդիստան): Երկիրը
գտնվում է Եվրասիայի և Արևմտյան
Ասիայի կենտրոնում, իսկ Հորմուզի
նեղուցը երկրին տալիս է
աշխարհաքաղաքական մեծ
կարևորություն[7]: Երկրի
մայրաքաղաքը և խոշորագույն
քաղաքը Թեհրանն է, որը համարվում է
նաև երկրի մշակութային և
տնտեսական կենտրոնը:

Ազարիներ կամ **իրանական ադրբեջանցիներ** (ադրբ.՝ ایران آذربایجانلیلاری), ինչպես նաև՝ **իրանցի թուրքեր**, **ադրբեջանցի թուրքեր**[7][8][9] կամ **պարսկական ադրբեջանցիներ**[10], էթնիկ

խումբ Իրանում, որը պատմական Ատրպատականի հիմնական բնակչությունն է: Մինչև ուշ միջնադար խոսել են իրանական լեզվով՝ ազարերենով, վերջին հարյուրամյակներին՝ ադրբեջաներենով, օգտագործում են արաբերենի այբուբենը:Ի տարբերություն Հարավային Կովկասում գտնվող Ադրբեջանի՝ ազարիներն իրանցիներ են, ովքեր ժամանակին Օսմանյան կայսրության ձուլման քաղաքականության հետևանքով կորցրել են իրենց մայրենի իրանական լեզուն, սակայն պահպանել են սեփական իրանական մշակույթը, ուստիև իրենց համարում են իրանցիներ[11]: Իրանի հյուսիսային հատվածը, որտեղ բնակվում են ազարիները, կոչվում է Իրանական

Ադրբեջան, ներառելով 4 ազարիաբնակ նահանգներ: Ազարիները բնակվում են նաև այլ նահանգներում և Իրանից դուրս: Պանթյուրքական և Ադրբեջանի քաղաքականության հետևանքով ազարիների շրջանում տարածվել է այն գաղափարը, որի համաձայն իրենք նույն ադրբեջանցիներն են, և միևնույն երկրի՝ հարավային հատվածը[12]:

Ազարիների ընդհանուր քանակն այժմ վիճելի է: 21-րդ դարի սկզբում սփյուռքում բնակվում են ավելի քան մեկ միլիոն ազարիներ, իսկ հայրենի Իրանում բնակչության թիվը տատանվում է: Իրանական Ադրբեջանի 4 նահանգներում (Արևմտյան Ադրբեջան, Արևելյան Ադրբեջան, Արդաբիլ և Զանջան)

բնակվում է 8 միլիոն ազարի [13][14][15][16], իսկ դրանից
դուրս՝ Համադան և Ղազվին ազարիաշատ նահանգներում՝ մոտ 2 միլիոն[17][18], մայրաքաղաք Թեհրանում՝ 2-3 միլիոն[19]: Այլ նահանգների հետ միասին՝ իրանաբնակ ազարիների թիվը չի անցնում 16-17 միլիոնը՝ Իրանի բնակչության մեկ քառորդը[20], սակայն նշվում են ուռճացված (23 միլիոն) և գերուռճացված (30 միլիոն) տվյալներ: